ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆ ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ -ԲԵԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի արեւելագիտության ինստիտուտում, նոյեմբերի ***14-15***-ին, տեղի ունեցավ համալսարանի հայագիտության բաժնի հիմնադիրներից մեկի՝ ժամանակի ակնառու մտավորական, հայագետ, արեւելագետ, պրոֆեսոր, համալսարանի երկարամյա դասախոս Լեւոն Մելիքսեթ-Բեկի ***(1890-1963)*** հիշատակին նվիրված գիտական կոնֆերանս, որը նախագահում էր արեւելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր, Վրաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ Ապոլոն Սիլագաձեն:

Իրենց ողջույնի խոսքում՝ Ապոլոն Սիլագաձեն, Վրաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր Զազա Ալեքսիձեն, Իվ.Ջավախիշվիլու համալսարանի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Դարեջան Թվալթվաձեն միջոցառումը գնահատեցին` իբրեւ անվանի գիտնականի` համալսարանի պատմության մեջ ներդրած մեծ ավանդի արժանի հատուցում:
Լեւոն Մելիքսեթ-Բեկի անսահման բարության, ազնվության մասին եւ` նրա մարդկային այլ հատկանիշները վեր հանող հուշերով, հանդես եկան պրոֆեսորներ Նաթելա Կութելիան, Ջեզվա Մեդուլաշվիլին, Նոմադի Բարթաիան, Ցիսանա Ամբուլաձեն, բանաստեղծ, թարգմանիչ Գիվի Շահնազարը:
Վրաստանի նախագահի խորհրդական, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը ողջունելով` միջոցառման նախաձեռնողներին կոչեց շարունակել Մելիքսեթ-Բեկ գիտնականի ու մարդու կենսակերպը, որ իմաստավորված էր վրաց ու հայ ժողովուրդների բարեկամության ամրապնդման գաղափարներով:
Կոնֆերանսի 2-րդ բաժնում պրոֆեսորներ Բոնդո Արվելաձեն, Քեթեւան Ասաթիանին, Մարիամ Չխարտիշվիլին, Նոմադի Բարթաիան հանդես եկան` «Լեւոն Մելիքսեթ-Բեկի կյանքն ու գործունեությունը», «Ազգային արխիվում պահպանված Լեւոն Մելիքսեթ-Բեկի արխիվը», «Ազգի կոնցեպտուալիզացիայի երկու մոդելի` ազգի եւ ժողովրդի մասին», «Սայաթ-Նովայի վրացական բանաստեղծություններում որոշ պարսկական փոխառությունների մասին» թեմաներով:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

1 / 1